ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«___» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000112

Ձեռնարկողը՝ ***«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ***
Ք. Վանաձոր, Վարդանանց 23/159

Գործունեությունը՝ ***Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի հիմնական շենքի ամրացման և մեկ մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000112

<<18>> 11 2020թ.

Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի հիմնական շենքի ամրացման և մեկ մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Օհանավան համայնք

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ: Գործունեությունն իրականացվելու է Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի տարածքում:

Ըստ նախնական գնահատման հայտի գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքի ամրացման և նոր մասնաշենքերի կառուցման շինարարական նախագիծը մշակվել է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ճարտարապետական և կոնստրուկտիվ գծագրերի, ինժեներա-երկրաբանական հետազոտության մասին եզրակացության և դպրոցի գոյություն ունեցող ամրացման ենթակա մասնաշենքի տեխնիկական վիճակի հետազննության եզրակացության հիման վրա:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ դպրոցի կառուցման և վերակառուցման աշխատանքներն իրականացվելու են անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 0.564հա ընդհանուր մակերեսով հողամասում: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակն է՝ սեյսմիկ անվտանգության բարելավման շրջանակներում ապահովել դպրոցի անվտանգությունը, սեյսմակայունությունը և մեկ նոր մասնաշենքի կառուցումը:

Նկարագրական մաս.

Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման գործունեության շրջանակում տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների շրջանակն ընդգրկում է 5518.21մ^2 տարածք, մասնավորապես, դպրոցի մասնաշենքերի (ներառյալ՝ կաթսայատուն) և

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ԷԿՈՍԵՐՎԻՍ» ՊՈԱԿ ԵՐԵՎԱՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT" STATE NON-PROFIT ORGANIZATION ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

էլ.ենթակայան) կառուցապատման մակերեսը կազմելու է 1896մ², բարեկարգվելու է 3622.21մ² տարածք, ներառյալ՝ բացօթյա մարզահրապարակը 428.64մ², նորաստեղծ ասֆալտապատ գոտին 2 521մ² և նորաստեղծ կանաչ գոտին 672.57մ²:

Տարածքում առկա է անօրինական տնկված պտղատու ծառերի այգի, որը գտնվում է նախագծվող մասնաշենքի գոտում և նախատեսվում է հեռացնել, ինչը համաձայն առկա արձանագրության համաձայնեցված է տվյալ ծառերը տնկող անձի հետ: Դպրոցի տարածքում այլ բուսականությունն, ինչպես նաև ոռոգման ջրի համակարգը բացակայում է: Դպրոցից 20-100մ հեռավորության վրա առկա են տնամերձ այգիներ և բնակելի տներ:

Տարածքի մնացած 121.79մ² հատվածն ըստ հատակագծման, զբաղեցված է բնահողով, որի երկայնքով ձգվելու է նախատեսվող ոռոգման ջրագիծը (շուրջ 106.9մ²), իսկ 15մ² նախատեսվում է կենսաբանական կայանի տեղադրման համար: Տարածքի գոյություն ունեցող ծածկույթը ասֆալտե, խճավազային և հողային ծածկույթի տեսքով է: Շինարարական աշխատանքները տևելու են 20 ամիս, աշխատանքների ընթացքում ներգրավելու են 26 մարդ:

Համաձայն նախնական գնահատման հայտի բնութագրվող տեղանքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև տարածքով անցնող միգրացիոն ուղիներ:

Գոյություն ունեցող դպրոցը բաղկացած է երկու մասնաշենքից, որոնք առանձին կառույցներն են: Երկու մասնաշենքերը կառուցվել են տարբեր ժամանակաշրջաններում: Առաջին մասնաշենքը շահագործման է հանձնվել 1959 թվականին, ինչն ուղղանկյունաձև ուրվագծով 850մ² շինություն է, ունի վերգետնյա երկու և նկուղային հարկ: Նկուղային հարկը (նախկինում որպես մարզադահլիճ) նախագծով նախատեսվում է որպես հանդիսությունների սրահ՝ 16.6մ x 9մ հատակագծային առանցքային չափերով: Մասնաշենքը շահագործվում է ամբողջությամբ, որում տեղակայված են հիմնական՝ 5-12-րդ դասարանները, տնօրենի սենյակը և վարչական նշանակության այլ հիմնական սենյակները: Նախագծով նախատեսվում է մասնաշենքի վերակառուցում և վերահատակագծում՝ 400 աշակերտի համար: Վերահատակագծման արդյունքում լաբորատոր սենյակները տեղափոխվելու են նոր նախագծվող մասնաշենք, ինչը ծառայելու է բարձր դասարանների համար: Մասնաշենքում նախատեսվում են թեքահարթակներ և սակավաշարժ խմբերի համար վերելակ:

Գյություն ունեցող դպրոցի երկրորդ մասնաշենքը, որը ծառայում է որպես նախակրթարան ի սկզբանե նախատեսված է եղել որպես ուսուցչի տուն: Այստեղ են տեղակայված դպրոցի 1-4-րդ դասարանները, ինչը քանդվելու է, և դրան փոխարինելու է նախագծված երեք հարկանի 1004մ² մակերեսով նոր մասնաշենքը՝ 300 աշակերտի համար: Այս մասնաշենքի երկրորդ և երրորդ հարկերում նախատեսվում են քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության դասասենյակներ/լաբորատորիաներ: Բոլոր տարրական դասասենյակներում, լաբորատոր դասասենյակներում, ինչպես նաև բուժկետում նախատեսվում է տաք/սառը ջուր և լվացարաններ՝ ըստ գործող նորմերի: Արևմտյան հատվածում, նախատեսվում է 292.5մ² մակերեսով դպրոցի փակ մարզադահլիճ:

Տարածքի արևելյան հատվածում՝ ըստ գլխավոր հատակագծի, նախատեսվում է 428.64մ² դպրոցի բացօթյա մարզադաշտ:

Դպրոց տանող ճանապարհը միայն մեկն է՝ նախագծվող տարածքի հարավ-արևմտյան մասից: Քանի որ հողակտորն ամբողջովին շրջապատված է տնամերձ տարածքներով, ապա անհնար է դառնում լրացուցիչ այլ ճանապարհի նախագծումը/ստեղծումը:

Համաձայն նախնական գնահատման հայտի գոյություն ունեցող դպրոցի տարածքում քանդման/ապամոնտաժման աշխատանքների շրջանակը ներառում է.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER" SNCO
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- գոյություն ունեցող մասնաշենքի վերակառուցում և ամրացում,
- հին մասնաշենքի ապամոնտաժում և նոր մասնաշենքի կառուցում, ներառյալ՝ մարզադահլիճ և գոյություն ունեցող կաթսայատան վերահատակագծում,
- նոր կառուցվող բացօթյա սպորտային հրապարակ,
- տարածքի վերականգնման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները՝ ըստ ՇՆուԿ 3.01.01-85, կիրականացվեն երեք փուլերով՝

- նախաշինարարական փուլ,
- մասնաշենքի ապամոնտաժման շին-աշխատանքներ,
- մասնաշենքերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ:

Գոյություն ունեցող դպրոցի ամրացման աշխատանքները նախատեսված է իրականացնել տորկրետ եղանակով պատերի ամրացմամբ, իսկ ուժեղացումը՝ միաձույլ ե/բ շրջանակներով և դիաֆրագմաներով:

Դպրոցների շենքերում նախատեսվում է սառը և տաք ջրամատակարարման, հակահրդեհային և կենցաղային ջրերի հեռացման կոյուղու ցանցեր:

Նախագծվող դպրոցների արտաքին ջրամատակարարումը, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների, իրականացվելու է փողոցով անցնող համայնքային ջրագծից: Ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համար անցկացվելու են նոր ցանցեր:

Տաք ջրամատակարարումն իրականացվելու է կաթսայատանը տեղադրվող արագընթաց ջրատաքացուցիչների, ինչպես նաև արևային ջրատաքացուցիչների միջոցով: Դպրոցի տանիքում տեղադրվելու են արևային վահանակներ՝ 320Վտ հզորությամբ, բազմաբյուրեղներ՝ 100 հատ:

Դպրոցի կաթսայատան հարևանությամբ տեղադրվելու է FBR-20 կենսաբանական կայան:

Նախագծվող կաթսայատան գազամատակարարումը նախատեսվում է 76մմ տրամագիծ ունեցող, 280.8գծմ երկարությամբ խողովակաշարով և մոտ 270մ հեռավորության վրա գտնվող վերգետնյա միջին ճնշման գազատարից: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել ջրային 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 250կՎտ հզորության, բնական գազի այրմամբ:

Համաձայն նախագծի՝ նախաշինարարական աշխատանքների փուլում կիրականցվեն շինարարական հրապարակի կազմակերպման և տարածքի նախապատրաստական գործողություններ՝

- դպրոցի տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում,
- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումներ,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքեր՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգենիկ, կենցաղային և հանգստի պայմաններ (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, բիոզուգարան և լվացարան, աշղեկի աշխատասենյակ և այլն),
- շինանյութերի պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրեր,
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիներ,
- դպրոցի տարածքում գոյություն ունեցող շինության քանդում/ապամոնտաժում և շին աղբի տեղափոխում ու հրապարակի մաքրում՝ ՀՀ կառավարության 2019թ.փետրվարի 6-ի N 87-Ա որոշման համաձայն,
- տարածքի համահարթեցում և հողային աշխատանքներ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացող շինանյութը սեփականության իրավունքով, սահմանված կարգով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպությանը: Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի տեղափոխման աշխատանքները իրականացվելու են շինարար կապալառուի սեփական միջոցների հաշվին: Մասնաշենքերի ապամոնտաժման գործողությունների տևողությունը նախատեսվում է մոտ 2 ամիս:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ 3000մ^2 մակերեսով տարածքների ջրցանման համար 495մ^3, իսկ հողի (գրունտի) խոնավացման, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար՝ 3568մ^3: Շինարարության փուլում ընդհանուր ջրապահանջը կազմելու է 4063մ^3, որը մատակարարվելու է տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից: Աշխատանքների շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը վերցվելու է գոյություն ունեցող և վերակառուցվող մասնաշենքի սանհանգույցներից: Շինհրապարակում նախատեսվում է մոտ 3մ^3 տարողունակությամբ կեղտաջրերի հեռացման տարա:

Նախատեսվող գործունեության ընթացքում ջրային համակարգերի վրա թե ուղղակի, թե անուղակի ազդեցություններ չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ: Աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի տարածքում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները:

Տարածքում հողային աշխատանքեր կատարելուց առաջ նախատեսվում է իրականացնել առկա բուսահողի (106.25խմ) մերկացում, կուտակում և պահպանում հրապարակի հատուկ առանձնացված տեղում՝ հետագայում տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Հիմքերի խրամատների և փոսորակների հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով (ЭО-3323А մակնիշի էքսկավատոր):

Հիմքերի տակ գրունտը (10-15 սմ շերտով) մշակվելու է ձեռքի աշխատանքով՝ համապատասխան գործիքների կիրառմամբ:

Հեռացված գրունտը (1588.5խմ) պահպանվելու է փորվածքների հետլիցքի (700խմ) նպատակով՝ մնացած մասը (888.5խմ) տեղափոխելով աղբավայր:

Շինարարության փուլում առաջանալու են մոտ 1758.62տ շինարարական աղբ և ≤3 կգ/օր կենցաղային աղբ: Կենցաղային աղբը հավաքվելու է հրապարակում տեղադրվող աղբի համար նախատեսվող փակ տարաներում, այնուհետև տեղափոխվելու է տեղամասից 3.5 կմ հեռավորության վրա գտնվող վայր՝ համաձայն համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի:

Շինարարության ընթացքում օգտագործված յուղերը (շուրջ ≤20 լ) հավաքվելու և պահվելու են հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում հանձնվելու են վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները պահվելու են հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, ավտոբետոնապոմպ, էքսկավատոր, ավտոհնձնաթափ, ավտոբետոնախառնիչ, ամբարձիչ, եռակցման ագրեգատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարության համար անհրաժեշտ բետոնը և շաղախը կառաքվեն մոտակա

ՇՐՋԱԿԱՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
RA YEREVAN

բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացած տրանսպորտային միջոցներով: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ բետոն, ամրանային ձողեր, երեսապատման սալիկներ, ներքին հարդարման, ջերմամեկուսիչ նյութեր և այլն:

Տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է.

- դպրոցի տարածքի հարավային մասի բարեկարգում,
- տարածքի ողջ պարագծով h=1.5-2.2մ բարձրությամբ ցանկապատի կառուցում և նոր դարպասի տեղադրում,
- ոռոգման ջրագծի նոր խողովակաշարի անցկացում,
- տարածքի հարավային մասի ռելիեֆի հողային հարթեցում և լիցք,
- հենապատերի ամրացում,
- տարածքի ազատ գոտիների ասֆալտապատում (2521քգմ):

Դպրոցի կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է նոր գազոնապատ 672.57մ^2 մակերեսով կանաչ գոտու ստեղծում, որտեղ կտնկվեն սյունաձև թույաներ (5 հատ), սողացող գիհի (9 հատ) և սամշիտ (1 հատ): Նշված աշխատանքներն իրականացվելու են տարածքի բուսահողով զբաղեցրած հատվածներում, ինչի համար լրացուցիչ բուսահող չի պահանջվում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև շինարարության ավարտը: Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- շինարարական մեքենաների երթևեկության կազմակերպում՝ համապատասխան չափաքանակներով ծածկված բեռնատարներով և շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների լվացված անվադողերով,
- շինհրապարակում նյութերի և թափոնների պահումը բետոնե տարածքում՝ ծածկված վիճակում,
- շինհրապարակի ցանկապատում, ցուցանակների ու պաստառների տեղադրում,
- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի հսկողություն՝ գործիքային չափագրումների կատարմամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին, մինչև ժամը 18:00,
- անսարք վիճակում մեքենաների և սարքավորումների օգտագործման բացառում,
- մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կանոնավոր մոնիթորինգի իրականացում,
- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինարարության ընթացքում աղբի ու շինարարական թափոնների տարանջատում դասակարգում ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ "ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ 02543163 ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն,

- բանվորական և այլ անձնակազմի ապահովում՝ սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց, ականջակալ և անվտանգության գոտի),

- դպրոցի կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ,

- աշխատանքների և արտակարգ իրավիճակների անվտանգության ապահովում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է ծրագրի արժեքի մոտ 2%-ը:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության շինարարությունը և շահագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվող գործունեության վերաբերյալ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է, հաշվի առնելով նաև ստացված դիտողությունները և առաջարկությունները:

Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակների նախարարության կողմից դպրոցի նոր կառուցվող մասնաշենքի համար նկուղային տարածքի նախատեսման առաջարկին, ապա ձեռնարկողի հիմնավորմամբ ՍԱԲ ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև գործող վարկային համաձայնագրով կառուցվող մասնաշենքում նկուղային տարածք ներառված չէ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա ցերեկային ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:

3. Վերանորոգվող շենք-շինությունները ծածկել համապատասխան բարձրության անջրթափանց թաղանթով:

4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու

կանոնները, ներառյալ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:

6. Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

7. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Օհանավան համայնքի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի հիմնական շենքի ամրացման և մեկ մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխավոր մասնագետ՝ Ա. Վարդանյան